

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության և Լիբանանի Հանրապետության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու վերաբերյալ

Հայաստանի Հանրապետությունը և Լիբանանի Հանրապետությունը, ցանկանալով աջակցել և ամրապնդել իրենց տնտեսական համագործակցությունը, կնքելով եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափումը կանխելու վերաբերյալ Համաձայնագիրը,

պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Անձինք, ում նկատմամբ կիրառվում է Համաձայնագիրը

Սույն Համաձայնագիրը կկիրառվի Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտներ հանդիսացող անձանց նկատմամբ:

Հոդված 2

Հարկեր, որոնց վրա տարածվում է Համաձայնագիրը

1. Սույն Համաձայնագիրը կկիրառվի յուրաքանչյուր Պայմանավորվող պետության կամ իր իշխանության տեղական մարմինների կողմից սահմանված եկամուտների և գույքի հարկերի վրա՝ անկախ դրանց գանձման եղանակից:

2. Եկամտից և գույքից գանձվող հարկեր են համարվում եկամուտների ընդհանուր գումարից, գույքի ընդհանուր արժեքից կամ դրանց առանձին տարրերից գանձվող բոլոր հարկերը, ներառյալ չարժական կամ անշարժ գույքի օտարումից, աշխատավարձից, ռոճիկից և այլ համանման վարձատրումից, ինչպես նաև գույքի հավելաձից գանձվող հարկերը:

3. Սույն Համաձայնագիրը կկիրառվի, մասնավորապես, հետևյալ գոյություն ունեցող հարկերի վրա՝

ա) Հայաստանի դեպքում.

i) շահութահարկ,

ii) եկամտահարկ,

iii) գույքահարկ,

(այսուհետ՝ Հայաստանի հարկ),

բ) Լիբանանի դեպքում.

i) շահութահարկ արդյունաբերական, առևտրային և ոչ առևտրային գործունեությունից,

ii) հարկ՝ աշխատավարձից, ռոճիկից և թոշակից,

iii) հարկ՝ շարժական գույքից ստացված եկամտից,

iv) հարկ՝ շինություններից,

(այսուհետ՝ Լիբանանի հարկ):

4. Սույն Համաձայնագիրը կկիրառվի նաև դասակարգված ցանկացած նույնական կամ էականորեն համանման հարկերի նկատմամբ, որոնք կգանձվեն սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո՝ ի լրումն Յրդ կետում նշված գոյություն ունեցող հարկերի կամ դրանց փոխարեն: Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կծանուցեն միմյանց իրենց համապատասխան հարկային օրենքներում կատարված էական փոփոխությունների մասին այդպիսի փոփոխություններից հետո ընդունելի ժամկետում:

Հոդված 3

Ընդհանուր սահմանումներ

1. Սույն Համաձայնագրի նպատակների համար, եթե այլ բան չի բխում համատեքստից՝

ա) «Պայմանավորվող պետություն» և «մյուս Պայմանավորվող պետություն» տերմինները, համատեքստից կախված, նշանակում են Հայաստան կամ Լիբանան,

բ) «Հայաստան» տերմինը նշանակում է Հայաստանի Հանրապետություն և, երբ օգտագործվում է աշխարհագրական իմաստով, նշանակում է տարածք, ներառյալ ներքին ջրային սահմանները, որի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունը իրականացնում է ինքնիշխան իրավունքներ և իրավասություն՝ համաձայն իր ներքին օրենսդրության և միջազգային իրավունքի,

գ) «Լիբանան» տերմինը նշանակում է Լիբանանի Հանրապետության տարածքը, ներառյալ նրա տարածքային ջրերը, ինչպես նաև հատուկ տնտեսական գոտին, որտեղ Լիբանանը իրականացնում է ինքնիշխանություն, ինքնիշխան իրավունքներ և իրավասություն իր ներքին օրենքների և միջազգային իրավունքի համաձայն, ծովային ջրերում գտնվող, ծովափի և այդ ջրերի հատակի հողային շերտերի բնական, կենսաբանական և հանքային պաշարների հետազոտության և շահագործման վերաբերյալ,

դ) «անձ» տերմինը ներառում է յուրաքանչյուր Պայմանավորվող պետությունում օրինականորեն հաստատված ֆիզիկական անձ, ընկերություն և անձանց ցանկացած այլ կազմավորում,

գ) «ընկերություն» տերմինը նշանակում է որևէ կորպորատիվ կազմավորում կամ ցանկացած այլ սուբյեկտ, որը հարկման նպատակների համար դիտարկվում է որպես կորպորատիվ կազմավորում,

դ) «Պայմանավորվող պետության ձեռնարկություն» և «մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկություն» տերմինները նշանակում են համապատասխանաբար Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն,

ե) «ազգային անձ» տերմինը նշանակում է.

i) Պայմանավորվող պետության քաղաքացիություն ունեցող ցանկացած ֆիզիկական անձ,

ii) ցանկացած իրավաբանական անձ, անձանց միավորում կամ որևէ այլ սուբյեկտ՝ իր կարգավիճակը ստացած որպես այդպիսին՝ Պայմանավորվող պետության գործող օրենսդրության հիման վրա,

զ) «միջազգային փոխադրում» տերմինը նշանակում է ցանկացած փոխադրում Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից շահագործվող ծովային, գետային օդային նավերով, ավտոմոբիլային կամ երկաթուղային փոխադրամիջոցներով, բացառությամբ, երբ ծովային, գետային կամ օդային նավը, ավտոմոբիլային կամ երկաթուղային փոխադրամիջոցը շահագործվում է միմիայն մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող կետերի միջև,

է) «իրավասու մարմին» տերմինը նշանակում է՝

i) Հայաստանի դեպքում՝ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար կամ նրա կողմից լիազորված ներկայացուցիչը,

ii) Լիբանանի դեպքում՝ ֆինանսների նախարար կամ նրա կողմից լիազորված ներկայացուցիչը,

ը) «հարկ» տերմինը, ենթատեքստից կախված, նշանակում է Հայաստանի հարկ կամ Լիբանանի հարկ:

Պայմանավորվող պետության կողմից Համաձայնագիրը կիրառելիս դրանում չսահմանված ցանկացած տերմին կունենա, եթե ենթատեքստից այլ բան չի բխում, այն նշանակությունը, որը նրան տրվում է այդ Պետության օրենքներով՝ հարկերի առնչությամբ, որոնց նկատմամբ կիրառվում է սույն Համաձայնագիրը. այդ Պետությունում գործող հարկային օրենքներով սահմանվող յուրաքանչյուր նշանակություն կգերակայի այդ Պետության այլ օրենքներով տերմինին տրվող նշանակության նկատմամբ:

Հոդված 4 Ռեզիդենտ

1. Սույն Համաձայնագրի նպատակների համար «Պայմանավորվող պետության ռեզիդենտ» տերմինը նշանակում է ցանկացած անձ, որը այդ

Պայմանավորվող պետության օրենքներով այնտեղ ենթակա է հարկման իր մշտական բնակության վայրի, ռեզիդենտության կամ ցանկացած այլ նման բնույթի չափանիշի հիման վրա: Սակայն այդ տերմինը չի ներառում ցանկացած անձի, որն այդ Պետությունում ենթակա է հարկման միայն այդ Պետության աղբյուրներից ստացած եկամտի կամ այնտեղ գտնվող գույքի նկատմամբ:

2. Եթե, առաջին կետի դրույթներին համապատասխան, ֆիզիկական անձը Պայմանավորվող երկու Պետություններում էլ ռեզիդենտ է, ապա նրա կարգավիճակը կորոշվի հետևյալ կերպ՝

ա) նա կհամարվի այն Պետության ռեզիդենտը, որտեղ ունի իրեն պատկանող մշտական կացարան. եթե նա երկու Պետություններում էլ ունի իրեն պատկանող մշտական կացարան, ապա կհամարվի այն Պետության ռեզիդենտը, որի հետ ունի առավել սերտ անձնական և տնտեսական կապեր (կենսական շահերի կենտրոն),

բ) եթե հնարավոր չէ որոշել այն Պետությունը, որտեղ նա ունի կենսական շահերի կենտրոն, կամ եթե նա Պետություններից և ոչ մեկում էլ չունի իրեն պատկանող մշտական կացարան, ապա կհամարվի միայն այն Պետության ռեզիդենտը, որտեղ ընթացիկ կացարան ունի,

գ) եթե նա երկու Պետություններում էլ ընթացիկ կացարան ունի կամ ոչ մեկում էլ այդպիսինը չունի, ապա կհամարվի միայն այն Պետության ռեզիդենտը, որի ազգային անձն է,

դ) եթե նա երկու Պետությունների ազգային անձ է կամ ոչ մեկում էլ այդպիսինը չէ, ապա Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կլուծեն այդ հարցը փոխադարձ համաձայնությամբ:

3. Երբ առաջին կետի դրույթների համաձայն՝ ֆիզիկական անձ չհանդիսացող անձը Պայմանավորվող երկու Պետություններում էլ ռեզիդենտ է, ապա նա համարվում է այն Պայմանավորվող պետության ռեզիդենտը, որի օրենսդրությամբ նա ստեղծվել է:

Հոդված 5

Մշտական հաստատություն

1. Սույն Համաձայնագրի նպատակների համար «մշտական հաստատություն» տերմինը նշանակում է գործունեության կայուն վայր, որի միջոցով ամբողջությամբ կամ մասամբ իրականացվում է ձեռնարկության գործունեությունը:

2. «Մշտական հաստատություն» տերմինը հատկապես ներառում է.

ա) ղեկավարման վայր,

բ) բաժանմունք,

գ) գրասենյակ,

դ) գործարան,

ե) արտադրամաս,

զ) ֆերմա կամ ցանկացած ցանկատարածք, և

է) հանքահոր, նավթի կամ գազի հորատանցք, քարհանք կամ բնական պաշարների արդյունահանման ցանկացած այլ վայր:

3. «Մշտական հաստատություն» տերմինը պարունակում է նաև՝

ա) շինարարական հրապարակ, շինարարության, հավաքման կամ տեղակայման ծրագիր կամ դրանց հետ կապված վերահսկողական գործունեությունները, բայց միայն երբ այդպիսի հրապարակի, ծրագրի կամ գործունեության տևողությունը գերազանցում է 9 ամիսը,

բ) Պայմանավորվող պետության ձեռնարկության ծառայությունների մատուցումը (այդ թվում՝ խորհրդատվական) այդ նպատակների համար վարձու աշխատողների կամ այլ անձնակազմի միջոցով մյուս Պայմանավորվող պետությունում, բայց միայն երբ այդ կարգի գործունեությունը, (մեկ կամ փոխկապակցված օբյեկտների համար) գերազանցում է վեցամսյա ժամանակահատվածը կամ ժամանակահատվածները ցանկացած տասներկուամսյա ժամկետում:

4. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին՝ «մշտական հաստատություն» տերմինը չի ներառում՝

ա) կառույցների օգտագործումը՝ բացառապես ձեռնարկությանը պատկանող ապրանքները կամ արտադրանքը պահելու, ցուցադրելու կամ առաքելու նպատակով,

բ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահումը՝ բացառապես պահպանման, ցուցադրման կամ առաքման նպատակով,

գ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահումը՝ բացառապես այլ ձեռնարկության կողմից վերամշակման նպատակով,

դ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի վաճառքը՝ ցուցադրված ոչ պարբերական ժամանակավոր տոնավաճառի շրջանակներում կամ ցուցահանդեսում այդպիսի տոնավաճառի կամ ցուցահանդեսի փակվելուց հետո 15 օրը չգերազանցող ժամանակահատվածում,

ե) գործունեության կայուն վայրի պահումը ձեռնարկության համար ապրանքների կամ արտադրանքի՝ բացառապես գնման, կամ տեղեկությունների հավաքման նպատակով,

զ) գործունեության կայուն վայրի պահումը ձեռնարկության համար՝ բացառապես նախապատրաստական կամ օժանդակ բնույթի ցանկացած այլ գործունեության իրականացման նպատակով,

է) գործունեության կայուն վայրի պահումը՝ բացառապես «ա»-«է» ենթակետերում նշված գործունեության տեսակների ցանկացած համակցության իրականացման համար՝ պայմանով, որ այդպիսի

համակցության արդյունքում գործունեության կայուն վայրի ընդհանուր գործունեությունը կրում է նախապատրաստական կամ օժանդակ բնույթ:

5. Չնայած 1-ին և 2-րդ կետերի դրույթներին, եթե անձը, չլինելով անկախ կարգավիճակով գործակալ, որին վերաբերում է 7-րդ կետը, գործում է Պայմանավորվող պետությունում մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության անունից, ունի և սովորաբար օգտագործում է ձեռնարկության անունից պայմանագրեր կնքելու իրավասություն, ապա համարվում է, որ այդ ձեռնարկությունն ունի մշտական ներկայացուցչություն այդ Պետությունում՝ ձեռնարկության համար այդ անձի իրականացրած ցանկացած գործունեության առումով, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ կետով սահմանափակվող այդ անձի գործունեության, համաձայն որի՝ գործունեությունը, անգամ մշտական գործունեության վայրի միջոցով իրականացնելու դեպքում, չի վերածում այդ մշտական գործունեության վայրը մշտական ներկայացուցչության՝ համաձայն սույն կետի դրույթներին:

6. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին, եթե Պայմանավորվող պետության ապահովագրական ձեռնարկությունը անկախ գործակալի կարգավիճակ չունեցող անձի միջոցով, որի նկատմամբ կիրառվում է 7-րդ կետը, մյուս Պայմանավորվող պետության տարածքում ընդունում է ապահովագրական մուծումներ կամ ապահովագրում է այնտեղ հնարավոր ռիսկից, ապա կհամարվի, որ ձեռնարկությունը ունի մշտական ներկայացուցչություն այդ մյուս Պետությունում. ասվածը վերաապահովագրման դեպքերին չի վերաբերում:

7. Ձեռնարկությունը չի համարվի մշտական հաստատություն ունեցող մյուս Պայմանավորվող պետությունում, եթե միայն նա ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ մյուս Պետությունում բրոքերի, կոմիսիոն գործակալի կամ անկախ կարգավիճակ ունեցող ցանկացած այլ գործակալի միջոցով՝ պայմանով, որ այդպիսի անձինք գործում են իրենց սովորական ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում:

8. Այն փաստը, որ Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը վերահսկում է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությանը կամ վերահսկվում է նրա կողմից, կամ ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ մյուս Պետությունում (մշտական հաստատության միջոցով կամ այլ կերպ), ինքնին այդ ընկերություններից մեկին չի վերածում մյուսի մշտական հաստատության:

Հոդված 6

Եկամուտ անշարժ գույքից

1. Եկամուտը, որը Պայմանավորվող պետության ռեզիդենտը ստանում է մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից (այդ թվում՝ գյուղատնտեսական կամ անտառտնտեսության գործունեությունից ստացված եկամուտը), կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. «Անշարժ գույք» տերմինը կունենա այն նշանակությունը, որը նա ունի այն Պայմանավորվող պետության օրենսդրությամբ, որտեղ գտնվում է դիտարկվող գույքը: Այդ տերմինը, բոլոր դեպքերում, կներառի անշարժ գույքին օժանդակ ամբաղջ գույքը, գյուղացիական և անտառային տնտեսությունում օգտագործվող սարքավորումներն ու անասունը, իրավունքները, որոնց նկատմամբ կիրառվում են հողային սեփականությանը վերաբերող ընդհանուր օրենսդրության դրույթները, ուզուֆրուկտը (այլ անձանց գույքի և այդ գույքից ստացված եկամուտների ցմահ օգտագործման իրավունք) և հանքային պաշարների, աղբյուրների և այլ բնական հանածոների վերամշակման կամ վերամշակման իրավունքի համար փոխհատուցման կարգով փոփոխական կամ հաստատուն վճարումների իրավունքները: Ծովային, գետային և օդային նավերը, ավտոմոբիլային և երկաթուղային փոխադրամիջոցները որպես անշարժ գույք չեն դիտարկվի:

3. Առաջին կետի դրույթները կկիրառվեն անշարժ գույքի անմիջական օգտագործումից, վարձակալության տրամադրելուց կամ ցանկացած այլ ձևով օգտագործումից ստացված եկամուտի նկատմամբ:

4. Առաջին և երրորդ կետերի դրույթները կկիրառվեն նաև ձեռնարկության անշարժ գույքից և անկախ անձնական ծառայություններ մատուցելու համար օգտագործվող անշարժ գույքից առաջացած եկամուտի նկատմամբ:

Հոդված 7

Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից

1. Պայմանավորվող պետության ձեռնարկության շահույթը ենթակա կլինի հարկման միայն այդ Պետությունում, եթե այդ ձեռնարկությունը ձեռնարկատիրական գործունեությունը չի իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով: Եթե ձեռնարկությունը ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում վերը նշված ձևով, ապա ձեռնարկության շահույթը կարող է հարկվել մյուս Պետությունում, բայց միայն նրա այն մասով, որը վերագրվում է այդ մշտական հաստատությանը:

2. Հաշվի առնելով 3-րդ կետի դրույթները, եթե Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, ապա Պայմանավորվող

պետություններից յուրաքանչյուրում այդ մշտական հաստատությանը կվերագրվի այն շահույթը, որը նա կարող էր ակնկալել ստանալ, եթե լիներ նույն կամ նման պայմաններում, նույն կամ նման գործունեություն իրականացնող և միանգամայն ինքնուրույն գործող առանձնացված և առանձին ձեռնարկություն և գործեր լիովին անկախ այն ձեռնարկությունից, որի մշտական հաստատությունն է:

3. Մշտական հաստատության շահույթը որոշելիս կթույլատրվի գործունեության հետ կապված մշտական հաստատության նպատակների համար կատարված փաստացի հաստատված ծախսերի հանում, ներառյալ կառավարչական և ընդհանուր վարչական ծախսերը, անկախ այն բանից՝ կատարված են դրանք այն Պետությունում, որտեղ գտնվում է այդ մշտական հաստատությունը, թե նրա սահմաններից դուրս:

4. Եթե Պայմանավորվող պետությունում մշտական հաստատությանը հաշվեգրվող շահույթի որոշումը սովորաբար կատարվում է ձեռնարկության շահույթի ընդհանուր գումարի տարբեր ստորաբաժանումների միջև համամասնական բաշխման հիման վրա, ապա 2-րդ կետում ոչինչ չի խոչընդոտի այդ Պայմանավորվող պետությանը հարկվող շահույթը հաշվարկել այդպիսի բաշխման միջոցով, ինչպես սովորաբար ընդունված է, սակայն ընդունված համամասնական բաշխման ձևը կլինի այնպիսին, որ արդյունքը համապատասխանի սույն հոդվածում ընդգրկված սկզբունքներին:

5. Ոչ մի շահույթ չի հաշվեգրվի մշտական հաստատությանը ձեռնարկության համար այդ մշտական հաստատության կողմից ապրանքների կամ արտադրանքի միայն գնման հիման վրա:

6. Նախորդ կետերի նպատակների համար մշտական հաստատությանը հաշվեգրվող շահույթը կորոշվի ամեն տարի միևնույն եղանակով, եթե չլինի այն փոխելու համար պատշաճ և բավարար պատճառ:

7. Եթե շահույթը ներառում է եկամտի այնպիսի տեսակներ, որոնց մասին առանձին նշվում է սույն Համաձայնագրի այլ հոդվածներում, ապա սույն հոդվածի դրույթները չեն ազդի այդ հոդվածների դրույթների վրա:

Հոդված 8

Միջազգային փոխադրումներ

1. Պայմանավորվող պետության ձեռնարկության շահույթը միջազգային փոխադրումներում ծովային, գետային և օդային նավերի կամ ավտոմոբիլային և երկաթուղային տրանսպորտի շահագործումից կհարկվի միայն այդ Պայմանավորվող պետությունում:

2. Առաջին կետի դրույթները կկիրառվեն նաև միավորումում, համատեղ ձեռնարկությունում կամ միջազգային գործող գործակալությունում մասնակցությունից եկամտի նկատմամբ:

Հոդված 9

Զուգորդված ձեռնարկություններ

1. Երբ.

ա) Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ուղղակի կամ անուղղակի կերպով մասնակցում է մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում, կամ

բ) միևնույն անձինք ուղղակի կամ անուղղակի կերպով մասնակցում են Պայմանավորվող պետության ձեռնարկության և մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում,

և յուրաքանչյուր դեպքում երկու ձեռնարկությունների միջև նրանց առևտրային և ֆինանսական փոխհարաբերություններում ստեղծվում կամ սահմանվում են պայմաններ, որոնք կարող էին լինել երկու անկախ ձեռնարկությունների միջև, ապա ցանկացած շահույթ, որը կարող էր հաշվեգրվել նրանցից մեկին, բայց այդ պայմանների պատճառով չի հաշվեգրվել, կարող է մտցվել այդ ձեռնարկության շահույթի մեջ և, համապատասխանաբար, հարկվել:

2. Երբ Պայմանավորվող պետությունը այդ Պետության ձեռնարկության շահույթի կազմում ներառում է և համապատասխանաբար հարկում շահույթ, որի նկատմամբ մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկությունը այդ մյուս Պետությունում արդեն պարտավորված է հարկման, և այդ ձևով ներառած շահույթը այն շահույթն է, որը հաշվեգրված կլիներ առաջին հիշատակված Պետության ձեռնարկությանը, եթե երկու ձեռնարկությունների միջև փոխհարաբերությունները լինեին այնպիսին, ինչպիսին անկախ ձեռնարկությունների միջև է, ապա այդ մյուս Պետությունը կկատարի այնտեղ հաշվեգրված այդ շահույթի հարկի գումարի համապատասխան ճշտում: Այդպիսի ճշտումը որոշելիս հաշվի կառնվեն սույն Համաձայնագրի մյուս դրույթները, իսկ Պայմանավորվող պետության իրավասու մարմինները, անհրաժեշտության դեպքում, կխորհրդակցեն միմյանց հետ:

Հոդված 10

Շահաբաժիններ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարվող

շահաբաժինները կարող են հարկվել այդ մյուս Պայմանավորվող պետությունում:

2. Սակայն այդպիսի շահաբաժինները կարող են հարկվել նաև Պայմանավորվող այն Պետությունում, որի ռեզիդենտն է շահաբաժիններ վճարող ընկերությունը, այդ Պայմանավորվող պետության օրենսդրությանը համապատասխան, բայց եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտն է, ապա այդպիսով պարտավորված հարկը չպետք է գերազանցի.

ա) շահաբաժինների համախառն գումարի 5%-ը, եթե փաստացի սեփականատեր հանդիսացող ընկերությունը (բացի ընկերակցությունից) ուղղակի տնօրինում է շահաբաժիններ վճարող ընկերության կանոնադրական կապիտալի առնվազն 25%-ը,

բ) շահաբաժինների համախառն գումարի 10%-ը՝ մնացած բոլոր դեպքերում:

Այս կետը չի ազդի ընկերության այն շահույթի հարկման վրա, որտեղից վճարվում են շահաբաժինները:

3. «Շահաբաժիններ» տերմինը սույն հոդվածում օգտագործելիս նշանակում է եկամուտ բաժնետոմսերից կամ շահույթին մասնակցության իրավունք տվող այլ պարտապահանջ չհանդիսացող իրավունքներից, ինչպես նաև եկամուտ այլ կորպորատիվ իրավունքներից, որը ենթակա է այնպիսի հարկային կարգավորման, ինչպես բաժնետոմսերից եկամուտը՝ այն Պետության օրենքների համաձայն, որի ռեզիդենտն է հանդիսանում բաշխումը իրականացնող ընկերությունը:

4. Առաջին և երկրորդ կետերի դրույթները չեն կիրառվի, եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է շահաբաժիններ վճարող ընկերությունը այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, կամ անկախ անձնական ծառայություններ է մատուցում այդ մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող հաստատուն բազայից, և հոլդինգը, որի առնչությամբ վճարվում են շահաբաժինները, փաստորեն կապված է այդպիսի մշտական հաստատության կամ հաստատուն բազայի հետ: Այդ դեպքում կկիրառվեն 7-րդ հոդվածի կամ 14-րդ հոդվածի դրույթները՝ կախված հանգամանքներից:

5. Երբ Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը շահույթ կամ եկամուտ է ստանում մյուս Պայմանավորվող պետությունից, այդ մյուս Պայմանավորվող պետությունը կարող է որևէ հարկով չհարկել ընկերության վճարած շահաբաժինները, բացառությամբ, եթե այդպիսի շահաբաժինները վճարվում են այդ մյուս Պետության ռեզիդենտին, կամ եթե հոլդինգը, որի հետ կապված վճարվում են

շահաբաժինները, գործնականորեն կապված է այդ մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող մշտական հաստատության կամ հաստատուն բազայի հետ, և ընկերության չբաշխված շահույթից հարկեր չգանձել, եթե նույնիսկ շահաբաժինները վճարվում են, կամ չբաշխված շահույթը լիովին կամ մասամբ կազմված է այդ մյուս Պետությունում առաջացող շահույթից կամ եկամուտից:

Հոդված 11 Տոկոսներ

1. Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարվող տոկոսները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն այդպիսի տոկոսները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որտեղ դրանք, համապատասխան այդ Պետության օրենսդրության, առաջանում են, բայց եթե ստացողը տոկոսների փաստացի սեփականատերն է, ապա այդ ձևով գանձվող հարկը չպետք է գերազանցի տոկոսների համախառն գումարի 8%-ը:

3. Անկախ 2-րդ կետի դրույթներից՝ Պայմանավորվող պետությունում առաջացած տոկոսները կազատվեն հարկումից այդ Պետությունում, եթե այդ տոկոսները ստացվել և փաստացի տնօրինվում են մյուս Պայմանավորվող պետության կառավարության կամ կենտրոնական բանկի կողմից:

4. «Տոկոսներ» տերմինը սույն հոդվածում օգտագործվելիս նշանակում է եկամուտ ցանկացած տեսակի պարտապահանջներից՝ անկախ գրավային ապահովումից և անկախ պարտապանի շահույթում մասնակցության իրավունքի անկախությունից և, մասնավորապես, եկամուտ կառավարական արժեթղթերից և եկամուտ պարտատոմսերից կամ փոխառության տոմսերից, ներառյալ այդպիսի արժեթղթերի, պարտատոմսերի և փոխառության տոմսերի հետ կապված պարզևավճարներն ու շահումները: Սույն հոդվածի նպատակների համար ժամկետանց վճարումների դիմաց գանձվող տուգանքները որպես տոկոսներ չեն դիտարկվի:

5. Առաջին և երկրորդ կետերի դրույթները չեն կիրառվի, եթե տոկոսների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պետությունում, որտեղ առաջանում են տոկոսները, այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, կամ անկախ անձնական ծառայություններ է մատուցում այդ մյուս Պետությունում այնտեղ գտնվող հաստատուն բազայի միջոցով, և պարտապահանջը, որի առնչությամբ վճարվում են տոկոսները, փաստորեն կապված է այդպիսի

մշտական հաստատության կամ հաստատուն բազայի հետ: Այդ դեպքում կկիրառվեն 7-րդ կամ 14-րդ հոդվածի դրույթները՝ կախված հանգամանքներից:

6. Համարվում է, որ տոկոսներն առաջանում են Պայմանավորվող պետությունում, եթե վճարողն ինքը Պետությունն է, նրա իշխանության տեղական մարմինը կամ այդ Պետության ռեզիդենտը: Սակայն եթե տոկոսներ վճարող անձը, անկախ այն բանից՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, թե ոչ, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն կամ հաստատուն բազա, որի առնչությամբ առաջացել է պարտքը, որի համար վճարվել են տոկոսները, և այդպիսի տոկոսների վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան, ապա այդպիսի տոկոսները կհամարվեն առաջացած այն Պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան:

7. Եթե վճարողի և փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով պարտապահանջի առնչությամբ վճարվող տոկոսների գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կկիրառվեն միայն վերջին հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների գերազանցող մասը կմնա հարկման ենթակա Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրի օրենսդրության համաձայն՝ հաշվի առնելով սույն Համաձայնագրի այլ դրույթները:

Հոդված 12 Ռոյալթի

1. Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարվող ռոյալթին կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն, այդպիսի ռոյալթին կարող է հարկվել նաև Պայմանավորվող պետությունում, որտեղ դրանք առաջանում են համապատասխան այդ Պետության օրենսդրության, բայց եթե ստացողը ռոյալթի փաստացի սեփականատերն է, ապա այդ ձևով գանձվող հարկը չպետք է գերազանցի ռոյալթի համախառն գումարի 5 %-ը:

3. «Ռոյալթի» տերմինը սույն հոդվածում օգտագործելիս նշանակում է ցանկացած տեսակի վճարումներ՝ ստացված որպես գրականության, արվեստի կամ գիտական աշխատանքի օգտագործման, կամ օգտագործման իրավունքի համար ցանկացած հեղինակային իրավունքներից, ներառյալ կինոֆիլմերը (կամ ռադիոհաղորդումների և

հեռուստահաղորդումների ֆիլմերը կամ ձայնագրությունները), արբանյակով, կաբելով, օպտիկական թելիկներով կամ համանման տեխնոլոգիայով հասարակությանը մատուցվող հաղորդումները, ցանկացած պատենտից, ապրանքային նշանից, նախագծից կամ մոդելից, պլանից, գաղտնի բանաձևից կամ գործընթացից, կամ արդյունաբերական, առևտրային, գիտական փորձի վերաբերյալ տեղեկատվության համար:

4. Առաջին և երկրորդ կետերի դրույթները չեն կիրառվի, եթե ռոյալթիի փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում է ռոյալթին, այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, կամ անկախ անձնական ծառայություններ է մատուցում այդ մյուս Պետությունում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով կամ անկախ անձնական ծառայություններ է մատուցում այդ մյուս Պետությունում այնտեղ գտնվող հաստատուն բազայի միջոցով, և իրավունքը կամ գույքը, որի առնչությամբ վճարվում է ռոյալթին, փաստորեն կապված է այդպիսի մշտական հաստատության կամ հաստատուն բազայի հետ: Այդ դեպքում կկիրառվեն 7-րդ հոդվածի կամ 14-րդ հոդվածի դրույթները՝ կախված հանգամանքներից:

5. Համարվում է, որ ռոյալթին առաջանում է Պայմանավորվող պետությունում, եթե վճարող են հանդիսանում ինքը Պետությունը, նրա իշխանության տեղական մարմինը կամ այդ Պետության ռեզիդենտը: Սակայն եթե ռոյալթի վճարող անձը, անկախ այն բանից՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, թե ոչ, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն կամ հաստատուն բազա, որի առնչությամբ առաջացել է ռոյալթի վճարելու պարտավորություն, և այդպիսի ռոյալթիի վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան, ապա այդպիսի ռոյալթին կհամարվի առաջացած այն Պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան:

6. Եթե վճարողի և փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով օգտագործման, իրավունքի կամ տեղեկատվության համար վճարվող ռոյալթիի գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կկիրառվեն միայն վերջին հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների գերազանցող մասը կմնա հարկման ենթակա Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրի օրենսդրության համաձայն՝ հաշվի առնելով սույն Համաձայնագրի այլ դրույթները:

Հոդված 13
Գույքի արժեքի հավելաձև

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող՝ 6-րդ հոդվածում սահմանված անշարժ գույքի օտարումից ստացած արժեքի հավելաձև կարող է հարկվել այդ մյուս Պայմանավորվող պետությունում:

2. Պայմանավորվող պետության ձեռնարկության՝ մյուս Պայմանավորվող պետությունում ունեցած մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մաս կազմող շարժական գույքի, կամ Պայմանավորվող պետության ռեզիդենտի մյուս Պայմանավորվող պետությունում անկախ անձնական ծառայությունների մատուցման նպատակով ունեցած հաստատուն բազային վերաբերող շարժական գույքի օտարումից ստացած արժեքի հավելաձև, ներառյալ այդպիսի մշտական հաստատության (առանձին կամ ամբողջ ձեռնարկության հետ մեկտեղ) կամ այդպիսի հաստատուն բազայի օտարումից ստացած արժեքի հավելաձև, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

3. Միջազգային փոխադրումներում գործող ծովային, գետային կամ օդային նավերի, ավտոմոբիլային կամ երկաթուղային փոխադրամիջոցների շահագործմանը վերաբերող շարժական գույքի օտարումից Պայմանավորվող պետության ձեռնարկության ստացած արժեքի հավելաձև հարկվում է միայն այդ Պայմանավորվող պետությունում:

4. Առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ կետերում չնշված ցանկացած գույքի օտարումից ստացած արժեքի հավելաձև հարկվում է միայն այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում գույք օտարողը:

Հոդված 14
Անկախ անձնական ծառայություններ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած եկամուտը մասնագիտական ծառայությունների մատուցման կամ այլ անկախ բնույթի գործունեության առնչությամբ ենթակա կլինի հարկման միայն այդ Պետությունում, բացառությամբ հետևյալ դեպքերի, երբ այդպիսի եկամուտը կարող է հարկվել նաև մյուս Պայմանավորվող պետությունում.

ա) եթե նա մյուս Պայմանավորվող պետությունում իր գործունեությունը իրականացնելու նպատակով իր տրամադրության տակ մշտապես ունի հաստատուն բազա, կամ

բ) եթե նա գտնվում է մյուս Պայմանավորվող պետությունում դիտարկվող օրացուցային տարում սկսվող կամ ավարտվող ցանկացած

տասներկուամսյա ժամկետում՝ ամբողջությամբ վերցրած 183 օրը գերազանցող ժամկետի կամ ժամկետների ընթացքում:

«ա» և «բ» ենթակետերում նշված դեպքերում եկամուտը կարող է հարկվել այդ մյուս Պայմանավորվող պետությունում, բայց միայն այդ հաստատուն բազային վերագրվող մասով կամ մյուս Պետությունում ռեզիդենտի գտնվելու ժամանակահատվածում իրականացրած գործունեությունից ստացված եկամուտի մասով:

2. «Մասնագիտական ծառայություններ» տերմինը ներառում է հատկապես անկախ գիտական, գրական, արվեստաբանական, կրթական կամ ուսուցչական գործունեությունը, ինչպես նաև բժիշկների, իրավաբանների, ճարտարագետների, ճարտարապետների, ատամնաբույժների, հաշվապահների անկախ գործունեությունը:

Հոդված 15

Կախյալ անձնական ծառայություններ

1. Հաշվի առնելով 16-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ և 21-րդ հոդվածների դրույթները՝ ռոճիկը, աշխատավարձը և այլ նման վարձատրումները, որոնք Պայմանավորվող պետության ռեզիդենտը ստացել է վարձու աշխատանքի դիմաց, ենթակա կլինեն հարկման միայն այդ Պետությունում, բացառությամբ մյուս Պայմանավորվող պետությունում իրականացված վարձու աշխատանքի: Եթե վարձու աշխատանքը իրականացված է մյուս Պայմանավորվող պետությունում այդպես, ապա այնտեղից ստացված այդպիսի վարձատրումը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Չնայած առաջին կետի դրույթներին՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած վարձատրությունը մյուս Պայմանավորվող պետությունում իրականացվող վարձու աշխատանքի դիմաց ենթակա կլինի հարկման միայն առաջին հիշատակված Պետությունում, եթե.

ա) ստացողը գտնվում է մյուս Պետությունում՝ դիտարկվող օրացուցային տարում սկսվող կամ ավարտվող ցանկացած տասներկուամսյա ժամկետում՝ ամբողջությամբ վերցրած 183 օրը չգերազանցող ժամկետի կամ ժամկետների ընթացքում, և

բ) վարձատրությունը վճարվում է մյուս Պետության ռեզիդենտ չհանդիսացող գործատուի կողմից կամ նրա անունից, և

գ) վարձատրության վճարման ծախսերը չի կրում այդ մյուս Պետությունում գործատուի ունեցած մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան:

3. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից միջազգային փոխադրումներում շահագործվող ծովային, գետային կամ օդային նավերի վրա իրականացվող

վարձու աշխատանքի հետ կապված վարձատրությունը ենթակա կլինի հարկման միայն այդ Պետությունում:

Հոդված 16 Տնօրենների հոնորարներ

Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած տնօրենների հոնորարները և մյուս նմանատիպ վճարումները՝ որպես մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության տնօրենների խորհրդի անդամի վճարումներ, կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

Հոդված 17 Արվեստի աշխատողներ և մարզիկներ

1. Չնայած 14-րդ և 15-րդ հոդվածների դրույթներին՝ այն եկամուտը, որը Պայմանավորվող պետության ռեզիդենտը ստացել է որպես արվեստի աշխատող՝ թատրոնի, կինոյի, ռադիոյի, հեռուստատեսության դերասան կամ երաժիշտ, կամ որպես մարզիկ մյուս Պայմանավորվող պետությունում իրականացված, որպես այդպիսին, իր անձնական գործունեությունից, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Եթե արվեստի աշխատողի կամ մարզիկի, որպես այդպիսին, իրականացվող անձնական գործունեության եկամուտը վերագրվում է ոչ թե անմիջապես արվեստի աշխատողին կամ մարզիկին, այլ մեկ ուրիշ անձի, ապա, անկախ 7-րդ, 14-րդ և 15-րդ հոդվածների դրույթներից, այդ եկամուտը կարող է հարկվել այն Պայմանավորվող պետությունում, որտեղ իրականացվել է արվեստի աշխատողի կամ մարզիկի գործունեությունը:

Չնայած առաջին և երկրորդ կետերի դրույթներին՝ առաջին կետում նշված գործունեությունից ստացված եկամուտը՝ Պայմանավորվող պետությունների կառավարությունների միջև համաձայնեցված մշակութային և մարզական փոխանակման շրջանակներում, եթե այդպիսի գործունեությունը չի իրականացվում շահույթ ստանալու նպատակով, կազատվի հարկումից այն Պայմանավորվող պետությունում, որտեղ այդ գործունեությունը իրականացվել է:

Հոդված 18 Կենսաթոշակներ

Հաշվի առնելով 19-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթները՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարվող կենսաթոշակները և

այլ նմանատիպ վարձատրումները, կապված նախկին վարձու աշխատանքի հետ, ենթակա կլինեն հարկման միայն այդ Պետությունում:

Հոդված 19 Պետական ծառայություն

1. ա) Պայմանավորվող պետության կամ իշխանության տեղական մարմնի կողմից վճարած աշխատավարձերը, ռոճիկները և այլ նմանատիպ վարձատրումը (բացի կենսաթոշակից) ցանկացած ֆիզիկական անձի՝ Պայմանավորվող այդ պետությանը կամ նրա իշխանության տեղական մարմնին մատուցած ծառայությունների դիմաց ենթակա կլինի հարկման միայն այդ Պետությունում:

բ) Սակայն նշված աշխատավարձը, ռոճիկները և այլ նմանատիպ վարձատրումը ենթակա կլինեն հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ծառայություններն մատուցվում են այդ մյուս Պետությունում, և այդ Պետության ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձը՝

i) այդ մյուս Պետության ազգային անձ է, կամ

ii) այդ Պետության ռեզիդենտ չի դարձել միայն այդպիսի ծառայություններ մատուցելու նպատակով:

2. ա/ Որևէ կենսաթոշակ՝ վճարված ֆիզիկական անձին Պայմանավորվող պետության կամ իշխանության տեղական մարմնի կողմից ստեղծված ֆոնդերից, այդ Պետությանը կամ իշխանության մարմնին մատուցած ծառայությունների համար ենթակա կլինի հարկման միայն այդ Պետությունում:

բ/ Սակայն այդպիսի կենսաթոշակը ենթակա կլինի հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, և այդ Պետության ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձը տվյալ Պետության ռեզիդենտ է և ազգային անձ:

3. 15-րդ, 16-րդ, 17-րդ և 18-րդ հոդվածների դրույթները կկիրառվեն այն ծառայությունների մատուցումից ստացված աշխատավարձի, ռոճիկի և այլ նմանատիպ վարձատրման նկատմամբ, որոնք կապված են Պայմանավորվող պետության կամ նրա իշխանության տեղական մարմնի կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության հետ:

Հոդված 20 Ուսանողներ

Մինչև Պայմանավորվող պետություն անմիջական ժամանունը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ համարված կամ ներկայումս այդպիսին համարվող և առաջին հիշատակված Պետությունում բացառապես ուսանելու կամ նախապատրաստվելու նպատակով գտնվող ուսանողին կամ պրակտիկանտին կենսապահովման, կրթություն ստանալու կամ պրակտիկայի անցկացման նպատակով կատարված վճարումները չեն հարկվում այդ Պետությունում, եթե այդ վճարումների աղբյուրը գտնվում է այդ Պետության սահմաններից դուրս:

Հոդված 21

Պրոֆեսորներ, ուսուցիչներ և հետազոտողներ

1. Ֆիզիկական անձը, որը հանդիսանում է Պայմանավորվող պետության ռեզիդենտ կամ հանդիսացել է Պայմանավորվող պետության ռեզիդենտ մինչև անմիջապես մյուս Պայմանավորվող պետություն ժամանելը, այդ մյուս Պայմանավորվող պետության կառավարության կողմից արտոնագրված որևէ համալսարանի, քոլեջի, դպրոցի կամ այլ նմանատիպ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող ուսումնական հաստատության հրավերով գտնվում է այդ մյուս Պայմանավորվող պետությունում իր առաջին ժամանելու ամսաթվից 3 տարին չգերազանցող ժամանակահատվածի ընթացքում, բացառապես ուսուցանելու, հետազոտելու կամ միաժամանակ երկու նպատակներով և ստացել է վարձատրություն այդպիսի ուսումնական հաստատությունում ուսուցանելու կամ հետազոտելու համար, կազատվի հարկումից այդ մյուս Պայմանավորվող պետությունում:

2. Սույն հոդվածի առաջին կետի դրույթները չեն կիրառվի հետազոտություններից ստացված եկամուտների նկատմամբ, եթե այդպիսի հետազոտությունները չեն անցկացվում հասարակության շահերի համար, այլ առանձին անձի կամ անձանց մասնավոր օգուտի համար:

Հոդված 22

Այլ եկամուտ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ սույն Համաձայնագրի նախորդ հոդվածներում չհիշատակված եկամուտների տեսակները, անկախ դրանց առաջացման վայրից, հարկման ենթակա կլինեն միայն այդ Պայմանավորվող պետությունում:

2. Առաջին կետի դրույթները չեն կիրառվում 6-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված անշարժ գույքի եկամուտներից տարբեր այլ եկամուտների նկատմամբ, եթե նման եկամուտներ ստացողը, լինելով

Պայմանավորվող պետության ռեզիդենտ, մյուս Պայմանավորվող պետությունում իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով կամ մատուցում է այդ մյուս Պետությունում անկախ անձնական ծառայություններ այնտեղ գտնվող հաստատուն բազայի միջոցով, և իրավունքը կամ գույքը, որոնց կապակցությամբ ստացվել է եկամուտը, հիրավի կապված է այդպիսի մշտական հաստատության կամ հաստատուն բազայի հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ կամ 14-րդ հոդվածների դրույթները՝ կախված հանգամանքներից:

3. Չնայած առաջին և երկրորդ կետերի դրույթներին, Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ սույն Համաձայնագրի նախորդ հոդվածներում չհիշատակված և մյուս Պայմանավորվող պետությունում առաջացած եկամտի տեսակները կարող են հարկվել նաև այդ մյուս Պետությունում:

Հոդված 23

Գույք

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի սեփականություն հանդիսացող և մյուս Պայմանավորվող պետությունում որպես անշարժ գույք գտնվող 6-րդ հոդվածի 2-րդ կետում հիշատակված ներկայացված գույքը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Պայմանավորվող պետության ձեռնարկության գույքը՝ ներկայացված մյուս Պայմանավորվող պետությունում ունեցած մշտական հաստատության մաս կազմող շարժական ձեռնարկատիրական գույքով, կամ Պայմանավորվող պետության ռեզիդենտի տնօրինության տակ գտնվող և անկախ անձնական ծառայություններ մատուցելու նպատակով մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող հաստատուն բազայի հետ կապված շարժական գույքը կարող է հարկվել այդ մյուս Պայմանավորվող պետությունում:

3. Գույքը՝ ներկայացված Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում շահագործվող ծովային, գետային, օդային նավերով, ավտոմոբիլային և երկաթուղային փոխադրամիջոցներով և այդպիսի փոխադրամիջոցների շահագործմանը վերաբերող շարժական գույքով, հարկման ենթակա կլինի միայն այդ Պայմանավորվող պետությունում:

4. Պայմանավորվող պետության ռեզիդենտի գույքի բոլոր այլ տարրերը հարկման ենթակա կլինեն միայն այդ Պետությունում:

Հոդված 24

Կրկնակի հարկման բացառումը

1. Եթե Պայմանավորվող պետության ռեզիդենտը եկամուտ է ստանում կամ գույք է տնօրինում, որոնք, սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան, կարող են հարկվել մյուս Պայմանավորվող պետությունում, ապա առաջին հիշատակված Պետությունը թույլ կտա.

ա/ այդ ռեզիդենտի եկամտահարկից հանել այդ մյուս Պետությունում վճարած եկամտահարկին հավասար գումար,

բ/ այդ ռեզիդենտի գույքահարկից հանել այդ մյուս Պայմանավորվող պետությունում վճարված գույքահարկին հավասար գումար:

Այդպիսի հանումը, սակայն, չի գերազանցի մինչև հանումի տրամադրումը հաշվարկված եկամտին կամ գույքին վերաբերող, կախված հանգամանքներից, եկամտահարկի կամ գույքահարկի մասը, որը կարող է հարկվել այդ մյուս Պայմանավորվող պետությունում:

2. Եթե սույն Համաձայնագրի ցանկացած դրույթին համապատասխան Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացվող եկամուտը կամ տնօրինվող գույքը ազատված է այդ Պետությունում հարկումից, ապա այդ Պետությունը, այնուամենայնիվ, կարող է այդ ռեզիդենտի եկամտի կամ գույքի մնացած մասի վրա տարածվող հարկի գումարը հաշվարկելիս՝ հաշվի առնել հարկումից ազատված եկամուտը կամ գույքը:

Հոդված 25 Անխտրականություն

1. Պայմանավորվող պետության ազգային անձինք մյուս Պայմանավորվող պետությունում չեն ենթարկվի այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված պարտավորությանը, քան այն հարկումը կամ դրա հետ կապված պարտավորությունը, որին ենթարկվում են կամ կարող են ենթարկվել այդ մյուս Պետության ազգային անձինք նույն հանգամանքների դեպքում մասնավորապես ռեզիդենտության առումով: Սույն դրույթը, անկախ առաջին հոդվածի դրույթներից, կկիրառվի նաև Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ չհանդիսացող անձանց նկատմամբ:

2. Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող, քաղաքացիություն չունեցող անձինք, Պայմանավորվող պետություններից և ոչ մեկում չպետք է ենթարկվեն այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված պարտավորությանը, քան հարկումը կամ դրա հետ կապված պարտավորությունը, որին ենթարկվում են կամ կարող են ենթարկվել այդ Պետությունների ազգային անձինք միևնույն հանգամանքների դեպքում:

3. Պայմանավորվող պետության ձեռնարկության մյուս Պայմանավորվող պետությունում ունեցած մշտական հաստատության հարկումը այդ մյուս Պետությունում չպետք է նվազ բարենպաստ լինի, քան այդ մյուս Պետությունում համանման գործունեություն իրականացնող

ձեռնարկության հարկումը: Այդ հոդվածի դրույթները չպետք է մեկնաբանվեն որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող՝ մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտներին տրամադրելու, հարկման նպատակների համար, որևէ անձնական արտոնություններ, պահումներ և զեղչեր, որոնք այդ մյուս Պետությունը տրամադրում է սեփական ռեզիդենտներին՝ նրանց քաղաքացիական կարգավիճակի կամ ընտանեկան հանգամանքների հիման վրա:

4. Բացառությամբ, երբ կիրառվում են 9-րդ հոդվածի 1-ին կետի, 11-րդ հոդվածի 7-րդ կետի կամ 12-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթները, Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարվող տոկոսները, ռոյալթին կամ կատարած այլ վճարումներ, այդպիսի ձեռնարկության հարկվող շահույթի որոշման նպատակով ենթակա կլինեն հանման այն պայմաններով, ինչպես առաջին հիշատակված Պետության ռեզիդենտին վճարելիս: Նմանապես Պայմանավորվող պետության ձեռնարկության ցանկացած պարտք մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին, այդ ձեռնարկության հարկվող գույքի որոշման նպատակով, ենթակա կլինի հանման այն պայմաններով, ինչպես եթե դրանք պարտավորվեին առաջին հիշատակված Պետության ռեզիդենտին:

5. Պայմանավորվող պետության ձեռնարկությունները, որոնց գույքը ամբողջովին կամ մասամբ պատկանում է մեկ կամ մի քանի ռեզիդենտների, ուղղակի կամ անուղղակի վերահսկվում է մյուս Պայմանավորվող պետության մեկ կամ մի քանի ռեզիդենտների կողմից, չպետք է առաջին հիշատակված Պետությունում ենթարկվեն այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված որևէ պարտավորության, քան հարկումը կամ դրա հետ կապված պարտավորությունները, որին ենթարկվում են կամ կարող են ենթարկվել առաջին հիշատակված Պետության նմանատիպ ձեռնարկությունները:

6. Չնայած 2-րդ հոդվածի դրույթներին՝ սույն հոդվածի դրույթները կկիրառվեն բոլոր տեսակի և բնույթի հարկերի նկատմամբ՝ բացի անուղղակի հարկերից:

Հոդված 26

Փոխհամաձայնեցման արարողակարգը

1. Եթե անձը համարում է, որ Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի գործողությունները հանգեցնում են կամ կհանգեցնեն սույն Համաձայնագրի դրույթներին չհամապատասխանող նրա հարկմանը, ապա նա կարող է, այդ Պետությունների ներքին օրենսդրությամբ նախատեսված պաշտպանական միջոցներից անկախ, ներկայացնել իր գործը այն Պայմանավորվող պետության իրավասու մարմնի քննարկմանը,

որի ռեզիդենտն է հանդիսանում կամ, եթե իր գործը վերաբերում է սույն Համաձայնագրի 25-րդ հոդվածի 1-ին կետին, այն Պայմանավորվող պետության իրավասու մարմինն, որի ազգային անձն է հանդիսանում: Դիմումը պետք է ներկայացվի երեք տարվա ընթացքում՝ Համաձայնագրի դրույթներին չհամապատասխանող հարկմանը հանգեցնող գործողության մասին առաջին ծանուցման պահից:

2. Եթե իրավասու մարմինը դիմումը կհամարի հիմնավորված և եթե չկարողանա ինքնուրույն հանգել գոհացուցիչ որոշման, կձգտի լուծել հարցը մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմնի հետ փոխհամաձայնությամբ՝ նպատակ ունենալով բացառել սույն Համաձայնագրին չհամապատասխանող հարկումը: Ցանկացած ձեռքբերված համաձայնություն պետք է իրականացվի անկախ Պայմանավորվող պետությունների ներքին օրենսդրությամբ նախատեսվող ժամանակային սահմանափակումից:

3. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները փոխհամաձայնությամբ կձգտեն լուծել ցանկացած դժվարություն կամ հակասություն, որը կարող է առաջանալ Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման ժամանակ:

Նրանք կարող են նաև, Համաձայնագրով չնախատեսված դեպքերում, համատեղ խորհրդակցել՝ կրկնակի հարկումը բացառելու նպատակով:

4. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կարող են անմիջական կապ հաստատել միմյանց հետ նախորդ կետերի ընթրման համար համաձայնության հասնելու նպատակով: Եթե համաձայնության հասնելու համար նպատակահարմար կլինի կազմակերպել կարծիքների բանավոր փոխանակում, այդպիսի փոխանակումը կարող է կատարվել Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինների ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովի նիստի շրջանակներում:

Հոդված 27

Տեղեկությունների փոխանակում

1. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները սույն Համաձայնագրի կամ Պայմանավորվող պետությունների ներքին օրենսդրությունների դրույթների իրագործման համար անհրաժեշտ տեղեկություններ կփոխանակեն՝ Համաձայնագրում ընգրկված հարկերի վերաբերյալ, որքանով հարկումը չի հակասի սույն Համաձայնագրին, հատկապես այդ հարկերի առնչությամբ՝ խարդախությունը կամ խուսափումը կանխելու նպատակով: Տեղեկության փոխանակումը 1-ին հոդվածով չի սահմանափակվում: Պայմանավորվող պետության կողմից ստացված ցանկացած տեղեկություն համարվում է գաղտնի այնպես, ինչպես և այդ Պետության ներքին օրենսդրության գծով ստացած

տեղեկությունը, և կհանձնվի միայն այն անձանց կամ մարմիններին (ներառյալ դատարանները և վարչական մարմինները), որոնք զբաղված են այն հարկերի գնահատմամբ կամ հավաքագրումով, հարկադիր բռնագանձմամբ կամ դատական հետապնդումով կամ բողոքարկման քննմամբ: Ստացված տեղեկությունը այդ անձինք կամ մարմինները պետք է օգտագործեն միայն այդպիսի նպատակների համար: Նրանք կարող են հրապարակել այդ տեղեկությունը դռնբաց դատական նիստի ընթացքում կամ դատական որոշումներ ընդունելիս:

2. 1-ին կետի դրույթները ոչ մի դեպքում չեն մեկնաբանվի որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող.

ա) անցկացնելու այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենսդրությունից կամ վարչական գործավարությունից տարբերվող վարչական միջոցառումներ,

բ) ներկայացնելու տեղեկություն, որը հնարավոր չէ ստանալ այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենսդրության կամ սովորական վարչական գործավարության ընթացքի համաձայն,

գ) ներկայացնելու տեղեկություն, որը կբացահայտի որևէ առևտրական, ձեռնարկատիրական, արդյունաբերական, առևտրային կամ մասնագիտական գաղտնիք, առևտրական գործընթաց բացահայտող կամ պետական քաղաքականությանը (հասարակարգին) հակասող տեղեկություն:

Հոդված 28

Դիվանագիտական առաքելությունների և հյուպատոսական ծառայությունների անդամներ

Սույն Համաձայնագրի ոչ մի դրույթ չի սահմանափակի դիվանագիտական առաքելությունների և հյուպատոսական ծառայությունների անդամների միջազգային իրավունքի ընդհանուր կանոնների կամ հատուկ համաձայնագրերի դրույթների շրջանակներում տրամադրված հարկային արտոնությունները:

Հոդված 29

Ուժի մեջ մտնելը

1. Սույն Համաձայնագիրը ենթակա է վավերացման և ուժի մեջ կմտնի յուրաքանչյուր Պետության ներքին օրենսդրությամբ ուժի մեջ մտնելու համար հաստատված ընթացակարգի պահանջները կատարելու մասին երկու Պետությունների վերջին գրավոր ծանուցման ամսաթվից 30 օր հետո:

Համաձայնագիրը կկիրառվի՝

ա) աղբյուրի մոտ գանձվող հարկերի նկատմամբ՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ին կամ հունվարի 1-ից հետո ստացվող եկամուտներից, և

բ) շահույթից, եկամտից և գույքից ստացվող այլ հարկերի նկատմամբ՝ Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ին կամ հունվարի 1-ից հետո:

Հոդված 30 Լրացումներ

Սույն Համաձայնագրում լրացումներ և փոփոխություններ կարող են կատարվել Պայմանավորվող պետությունների փոխադարձ համաձայնությամբ՝ արձանագրության տեսքով, որը կկազմի սույն Համաձայնագրի անբաժանելի մասը: Այդ արձանագրությունը կվավերացվի նույն կարգով, ինչ սույն Համաձայնագիրը:

Հոդված 31 Գործողության դադարեցումը

1. Սույն Համաձայնագիրը կմնա ուժի մեջ մինչև Պայմանավորվող պետությունների կողմից դրա գործողության դադարեցումը:

2. Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրը կարող է մյուս Պայմանավորվող պետությանը դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցել դադարեցման մասին՝ Համաձայնագիրը ուժի մեջ մտնելու պահից հինգ տարի անցնելուց հետո ցանկացած օրացուցային տարվա մինչև հունիսի 30-ը: Այդ դեպքում Համաձայնագիրը կդադարեցնի իր գործողությունը՝

ա) աղբյուրի մոտ գանձվող հարկերի նկատմամբ՝ ծանուցագիրը փոխանցելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո ստացվող եկամուտներից, և

բ) շահույթից, եկամտից և գույքից ստացվող այլ հարկերի նկատմամբ՝ դադարեցման մասին ծանուցագիրը փոխանցելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո:

Ի վկայություն որի՝ համապատասխան ձևով լիազորված ներքոստորագրողներս ստորագրեցինք սույն Համաձայնագիրը:

Կատարվել է Բեյրութ քաղաքում 1998 թվականի սեպտեմբերի 16-ին, երկու բնօրինակով՝ հայերեն, արաբերեն և անգլերեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են:

Մեկնաբանման ժամանակ ցանկացած տարածայնության դեպքում հիմք է ընդունվում անգլերեն տեքստը:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության և Լիբանանի Հանրապետության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկերի վճարումից խուսափելը կանխելու մասին Համաձայնագիրը կնքելիս ներքոստորագրյալները լրացուցիչ պայմանավորվեցին, որ ներքոնշյալ դրույթները կհամարվեն Համաձայնագրի անբաժանելի մասը.

5-րդ հոդվածի 4-րդ կետի առնչությամբ՝

«առաքում» տերմինը նշանակում է առաքում այն Պայմանավորվող պետության սահմաններից դուրս, որում գտնվում են կառույցները:

Ի վկայություն որի՝ համապատասխան ձևով լիազորված ներքոստորագրյալները ստորագրեցին սույն Արձանագրությունը:

Կատարվել է Բեյրութ քաղաքում 1998 թվականի սեպտեմբերի 16-ին՝ երկու բնօրինակով, հայերեն, արաբերեն և անգլերեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են:

Մեկնաբանման ժամանակ ցանկացած տարաձայնության դեպքում հիմք է ընդունվում անգլերեն տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2000 թվականի նոյեմբերի 9-ից: